THE WORLD BANK

Working for a World Free of Poverty

լրատվական հաղորդագրություն

լրատվական հաղորդագրություն
2012/274/ԵԿԱ

Համաշխարհային բանկն օժանդակում է Հայաստանին՝ պաշտպանելու իր անապահովներին և բարձրացնելու երկրի մրցունակությունը

Վաշինգտոն, 14 փետրվարի, 2012 թ. – Այսօր Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների խորհուրդը հաստատեց ֆինանսական ծրագիր, որի նպատակն է օգնել Հայաստանին պաշտպանելու իր առավել անապահով բնակչությանը, աջակցելու մարդկային կապիտալի զարգացմանը, և բարձրացնելու մրցունակությունը՝ մասնավոր հատվածի համար առավել նպաստավոր միջավայր ապահովելու և կառավարումն ուժեղացնելու միջոցով: Հայաստանին տրամադրվող **Երրորդ Զարգացման քաղաքականության գործառնությունը (ԶՔԳ)**՝ 80 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով, իրականացվում է Միջազգային զարգացման ընկերակցության (ՄԶԸ) կողմից հատկացված փոխառությամբ և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) վարկով, և վերջինն է այն երեք գործառնություններից, որոնք կոչված են սատարելու Հայաստանի կառավարությանը՝ իր ռազմավարական նպատակներին հասնելու գործում:

«Այս գործառնությամբ ավարտվում է 2009 թ. սկսված ծրագրերի շարքը, որն առանցքային տեղ էր գրավում Համաշխարհային Բանկի՝ Հայաստանի հետ իրականացվող Երկրի գործընկերության ռազմավարության (ԵԳՌ) մեջ, քանի որ այն օժանդակել է Հայաստանի կառավարության բարեփոխումների ընդհանուր ծրագրի հիմնական տարրերին՝ ուղղված տնտեսության վերականգնման կայունացմանը և անապահով ու խոցելի խավերի պաշտպանությանը»,- ասում է **Համաշխարհային բանկի Հարավային Կովկասի երկրների տարածաշրջանային տնօրեն պրն. Ասադ Ալամը**:

Այս գործառնությունն աջակցում է պետական բյուջեով նախատեսված աղքատամետ ծախսերի պահպանմանը, սոցիալական ապահովության ծրագրերի հասցեականության բարելավմանը, աղքատ համայնքներում նախադպրոցական ծրագրերի հասանելիությունը բարձրացնելուն, կրթության կառավարման արդյունավետության խթանմանը, ինչպես նաև առողջապահական ծառայություններում համավճարի քաղաքականության ներմուծմանը՝ ապահովելով համապատասխան արտոնություններ աղքատ ու խոցելի խավերի համար:

Հայաստանի մրցունակությունը բարձրացնելու և նրա աճի ներուժը հզորացնելու համար գործառնությունը կարևորում է մեկ պատուհանի սկզբունքի ներդնումը ձեռնարկությունների գրանցման գործընթացում, ռիսկերի վրա հիմնված աուդիտի ներմուծումը, *կանաչ միջանցքների* մշտական կիրառումը՝ մաքսազերման գործընթացը դյուրացնելու նպատակով, էլեկտրոնային հաշվետվության համակարգի կիրառումը՝ հարկային պարտավորություններն իրականացնելու հետ կապված ծախսերը նվազեցնելու նպատակով, և Ընդերքի մասին նոր օրենսգրքի կիրարկմանն ուղղված կանոնակարգի մշակումը՝ ներդրումներ գրավելու նպատակով:

«Չնայած տնտեսության վերականգնումն ընթացքի մեջ է, Հայաստանի առջև կանգնած են մարտահրավերներ՝ շուկա՝ նոր ընկերությունների մուտքը և տնտեսական մրցակցությունը խթանելը, այդ թվում՝ տնտեսության արտահանող հատվածներում, և աճի աղբյուրների դիվերսիֆիկացիան: Համաշխարհային բանկը վճռականորեն է տրամադրված օժանդակելու իշխանությունների ջանքերին այս մարտահրավերներին դիմակայելու հարցում»,- **ասում է Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակի ղեկավար պրն. Ժան-Միշել Հապին:**

«Զարգացման քաղաքականության գործառնությունների շարքն օժանդակել է առաջնահերթ բարեփոխումների փաթեթին, որն անհրաժեշտ է Հայաստանի մրցունակությունը բարձրացնելու համար»,- նշում է **Համաշխարհային բանկի ծրագիրը մշակած աշխատանքային խմբի ղեկավար Սուլեյման Կուլիբալին: -** *«Սա հատկապես կարևոր է գլոբալ բարդ միջավայրի համատեքստում աճի խթանման հնարավորության համար: ԶՔԳ ծրագիրն օժանդակել է նաև սոցիալական ապահովության ցանցը հզորացնելուն, որն առանցքային է Հայաստանում աղքատության կրճատման հարցում»:*

Երրորդ ԶՔԳ-ն ներառում է ՄԶԸ 50 մլն ԱՄՆ դոլար փոխառություն և ՎԶՄԲ 30 մլն ԱՄՆ դոլար վարկ: ՄԶԸ փոխառությունն ունի 25 տարվա մարման ժամկետ՝ 5 տարի արտոնյալ ժամկետով, իսկ ՎԶՄԲ վարկը՝ 25 տարվա մարման ժամկետ՝ 10 տարի արտոնյալ ժամկետով:

1992 թ. Համաշխարհային բանկին և 1993 թ. ՄԶԸ-ին Հայաստանի անդամակցությունից հետո՝ նրա նկատմամբ ՀԲ և ՄԶԸ ստանձնած հանձնառությունների ընդհանուր գումարը կազմում է 1.597 միլիոն ԱՄՆ դոլար:

Կոնտակտներ՝
Երևանում՝ Վիգեն Սարգսյան (374 10) 520-992, vsargsyan@worldbank.org
Վաշինգտոնում՝ Ջոնաթան Դեյլի (202) 473-2588, jdaly@worldbank.org
Հեռարձակման հարցերով՝ Նատալյա Սիեսլիկ, (202) 458-9369, ncieslik@worldbank.org

Հայաստանում Համաշխարհային բանկի գործունեության մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք http://www.worldbank.org.am կայքէջը: